Ռափայել Պատկանյան

Օրորոցի երգ

Արի՛, ի՛մ սոխակ, թո՛ղ պարտեզ, մերին,
Տաղերով քուն բե՛ր տըղիս աչքերին .
Բայց նա լալիս է . դու, սոխակ, մի՛ գալ.
Իմ որդին չուզե տիրացու դառնալ:

Ե՛կ, աբեղաձա՛գ, թո՛ղ արտ ու արոտ,
Օրորե՛ տըղիս, քընի է կարոտ .
Բայց նա լալիս է . դու, ձագուկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե աբեղա դառնալ:

Թո՛ղ դու, տատրակի՛կ, քու ձագն ու բունը,
Վուվուով տըղիս բե՛ր անուշ քունը .
Բայց նա լալիս է . տատրակի՛կ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե սըգավոր դառնալ:

Կաչաղա՛կ ճարպիկ, գող, արծաթասեր,
Շահի գըրուցով որդուս քունը բեր .
Բայց նա լալիս է . կաչաղա՛կ, մի՛ գալ,
Իմ որդին չուզե սովդաքար դառնալ:

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասի՛րտ բազե,
Քու երգը գուցե իմ որդին կուզե . . .
Բազեն որ եկավ՝ որդիս լըռեցավ,

Ռազմի երգերի ձայնով քընեցավ: